«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց լեզու եւ գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Հովնաթանյան

Ուսումնական հաստատություն՝ Ազարակի Տաճատ Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……....2

Գլուխ 1. Առակագրության առանձնահատկությունները……4

1.1 Առակի տեսակները, կառուցվածքը……..……..4

1.2 Առակները հայ գրականության մեջ……7

Գլուխ 2. Աստվածաշնչյան առակների դերը դպրոցահասակ երեխաների դաստիարակության մեջ……..9

2.1 Աստվածաշնչյան առակների ուսուցման կարեւորությունը դպրոցում……9

2.2 Աստվածաշնչյան առակները եւ դրանց մեկնաբանությունը ……..12

Եզրակացություն……17

Առաջարկներ……...……18

Օգտագործված գրականության ցանկ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն

Բոլոր ժամանակներում դաստիարակության խնդիրը յուրովի ուշադրության է արժանացել փիլիսոփաների, մանկավարժների եւ հոգեբանների հետազոտություններում: Մեր օրերում հրատապ է անհատի հոգեւոր դաստիարակության եւ կրթության զարգացման հիմնահարցը ազգային մշակույթի, արժեքների պահպանման եւ գալիք սերունդներին փոխանցման համատեքստում: Նման դասիարակության կառուցման գործում կարող է աջակցել աստվածաշնչյան առակները: Սակայն ժամանակակից կրթական ծրագրերում այսօր այնքան էլ մեծ ու առանձնահատուկ տեղ չի տրվում աստվածաշնչյան առակներին, իսկ եղած առակներն էլ ուսումնասիրվում են՝ բավարարվելով նրանց բովանդակությունը վերարտադրելով: Առակն ինքնին, որպես այլաբանորեն ներկայացված գրական ստեղծագործություն, այնքան էլ լավ չի ընկալվում աշակերտների կողմից: Մինչդեռ, աստվածաշնչյան առակը դաստիարակչական նպատակ ունեցող ստեղծագործություն է եւ օգնում է դպրոցականին իրական կյանքում ճիշտ կողմնորոշվելու եւ ավելի հեշտ ապրելու:

Աստվածաշնչյան առակի ուսումնասիրման հարցը արդիական է, քանի որ մարդ արարածը կյանքի օրենքները սիրում է սովորել օրինակով, իսկ առակը տալիս է այդ հնարավորությունները. մարդու համար ընդօրինակելն ավելի հեշտ է, քան վերացական խրատը, ուստի հերոսների արարքներով բացահայտվում է ստեղծագործության գաղափարը, որն էլ նպաստում է աշակերտների՝ արդար, ազնիվ, ճշմարտախոս, աշխատասեր, քաջ, անվախ ու հայրենասեր մարդ դաստիարակվելուն:

Հետազոտության նպատակ:

Վեր հանել աստվածաշնչյան առակների դերը եւ կարեւորությունը աշակերտների հոգեւոր դաստիարակության մեջ

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել առակագրության առանձնահատկությունները որպես գրական ժանր
- Հետազոտել հայ գրականության մեջ առակների դերը, եւեւավորման պատմությունը

- Բարձրաձայնել աստվածաշնչյան առակների կարեւորությունը կրթական գործընթացի մեջ
- Ուսումնասիրել աստվածաշնչյան առակները ու դրանց մեկնաբանությունը:

Հետազոտության կառուցվածք

Աշխատանքը կառուցված է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, գլուխներից, ենթագլուխներից, եզրակացությունից, առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից: Հետազոտության ծավալը 19 էջ է:

ԳԼՈՒԽ 1. ԱՌԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առակը ոչ միայն գրական-գեղարվեստական ժանր է, այլեւ ժողովրդական բարոյախոսություն եւ մարդկանց բարոյակրթական մտածողություն: Այն յուրահատուկ ստեղծագործություն է՝ համառոտ բովանդակությամբ եւ կյանքի այլաբանական արտացոլման արվեստի իր յուրօրինակ միջոցներով: Ինչպես էլ որ հանդես է եկել առակը՝ գրավոր կամ բանավոր, բանաստեղծության կամ արձակի ձեւով, միեւնույն է, ունեցել է իր ազդեցությունը մարդկային գիտակցության ու վարքի, բարքերի ու սովորույթների վրա:

1.1 Առակի տեսակները, կառուցվածքը

«Առակ» բառը հին հայերենում նշանակել է խրատ, իմաստություն, այլաբանություն, բարոյախրատական նշանակություն ունեցող փոքրիկ զրույց: Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակ է, որ վերոհիշյալ գրեթե բոլոր հատկանիշներն ունի իր մեջ ներառած:

Առակները գեղարվեստական փոքրիկ ստեղծագործություններ են կենդանիների, բույսերի, ինչպես նաեւ մարդկանց մասին պատմող զանազան հետաքրքրաշարժ զրույցներ, որոնք ունեն այլաբանական իմաստ: Նրանցում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում եւ խրախուսվում է լավը, բարին, գեղեցիկը, մարդկայինը եւ, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում է վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը: Ամեն մի առակ ունի խրատական դաստիարակիչ իմաստ:

Առակները հին ժամանակներից ի վեր սիրված ու թարգմանաբար տարածված են եղել աշխարհի շատ ժողովուրդների բանահյուսության եւ գրականության մեջ: Առակների ամենահին հեղինակը հույն Եզոպոսն է, որի անունով բազմաթիվ առակներ են պահպանվել հին հունական գրականության մեջ: Հին աշխարհը չի կասկածել Եզոպոսի գոյությանը: Առակագրի անձի պատմականությունը առաջին անգամ կասկածի տակ է դրել Մարտին Լյութերը: 18-րդ դարի բանասիրությունը հիմնավորել է այդ կասկածը: Եզոպոսի անունով պահպանվել է 427 առակ: Հենց այս առակներն են հետագայում մշակել ու թարգմանել նշանավոր առակագիրներ Լաֆոնտենը եւ Կռիլովը: Ակնհայտ է,

որ հայ առակագիրներ Մխիթար Գոշը եւ Վարդան Այգեկցին եւս գործ են ունեցել եզոպոսյան նյութի հետ[1]: Առակներով հարուստ է նաեւ հին հնդկական գրականությունը:

Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ: Նա, ինչպես երեւում է իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության եւ ճարտասանության հետ նաեւ առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել եւ մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար: Ինչ վերաբերում է ժողովրդական առակներին, որոնցից մի քանիսը պատահաբար մեջ են բերում հին հեղինակները, նույն բախտն են ունեցել, ինչ-որ մեր հին ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես: Դրա պատճառն այն է, որ առակները եկեղեցականների կողմից ոչ միայն արհամարհված են եղել իբրեւ գեղջկական, ուստի անարժեք բաներ, այլեւ իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Զանազան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են «հաւահմայք», «հացահմայք», «հատահարցք», մերժված եւ հաղորդության անարժան են համարել նաեւ «զբախաւսք, գրատեսք, շրջողք տանէ ի տուն, հետաքրքիրք, զրուցատարք, առասպելախաւսք»: Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն «առասպել» բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաեւ իբրեւ առակ: Մեծ դժվարությամբ առակը մուտք է գործում գրավոր գրականության մեջ: Եվ վերջապես 12-13-րդ դարերում արդեն հանդես են գալիս հայ նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշը եւ Վարդան Այգեկցին: Մխիթար Գոշն առակների մեջ տեսնում է բնականաբար 2 մաս՝ բուն պատմվածքը եւ խրատական եզրակացությունը: Պատմվածքը, որ նա շեշտում է առակ, գաղափար, օրինակ, եղանակ եւ այլ բառերով, ըստ Գոշի լինում է 3 տեսակ՝ բարոյական, առասպելական եւ ստեղծական: Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից եւ շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն եւ բույսերին՝ իբրեւ գործող անձերի, իսկ ստեղծական

[1] http://books.panarm.info/եզոպոս-առակներ

առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են։ Խրատական եզրակացությունը, որ հեղինակը կոչում է խրատ, նշանակ, ճշմարտություն եւ այլ բառերով, 2 տեսակ է։ «Ճշմարտությունը առակների հեղինակի համար երկու բովանդակություն կարող է ունենալ, երկու էություն՝ աշխարհական եւ եկեղեցական, ըստ որում նրա նպատակն է «կերպարանել»՝ պատկերացում տալ, բացահայտել, ցուցադրել, արտացոլել այդ երկու ճշմարտություններն այլաբանորեն։ Դատաստանագրքում հեղինակը ձգտել է նույն նպատակին հասնել՝ ճշմարտությունը (դարձյալ ՝ եկեղեցական եւ աշխարհական)պարզել օրենսդրական միջոցներով՝ կազմելով դրա համար 2 տիպի օրենքներ»։ Եվ քանի որ առակագրի համար էականը «ճշմարտությունն» է, ուստի առակի առասպելն այնպես է հորինվում, որ հարմարվի բարոյակրթական մասին կամ գործողությունն այնպես կարճ է պատմվում, որ երբեմն նույնիսկ խրատական մասն ավելիմեծ տեղ է բռնում, քան պատմվածքը։ Այսինքն՝ նպատակը ուսուցողական է։ Նույնքան ուշագրավ են Վ. Այգեկցու առակները։ Հայտնի է, որ նրա առակների գիտական հետազոտումը կատարել է հայագետ Նիկողայոս Մառն իր «Ժողովածոյք առակաց Վարդանաց» ուսումնասիրության մեջ։ Նա գիտականորեն ապացուցում է, որ արաբերեն «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերեն համանուն ժողովածուից։ Կարեւորը եւ գլխավորն այն է, որ 12-13-րդ դարերում եւ հետո ամեն տեղ առհասարակ սիրում էին առակներ ու զրույցներ։ Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր նաեւ աշխարհականների համար եւ զարգանում զանազան տիպերով եւ զանազան ծավալով։ Փաստորեն առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը։ Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է եւ օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչեւ այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ։

Առակների առանձնահատկություններից այն է որ նրանում միշտ կա քննադատություն, բարոյականության թեմաների արծածում։ Բոլոր առակները սովորաբար ունենում են **քննադատություն որոշակի վարքագծի վերաբերյալ**, կամ բարոյական ուղերձ, այսինքն ՝ խորհուրդ կամ վարք, որը տեղին է։ Այս բարոյականը

սովորաբար արտահայտություն է, մի տող, մի բան, որը գրավիչ է եւ հեշտությամբ հիշվում է:

Առակներում գրեթե միշտ կա պատմող: Այսինքն պատմողի ով լինելը եւս պետք է հաշվի առնի, քանի որ կերպարներն իրենք են փոխազդում միայն տվյալ պահին, եւ հենց պատմողն է ամեն ինչ դնում համատեքստում: Դա չի նշանակում, որ հերոսներից մեկը կարող է լինել հենց ինքը ՝ պատմողը: Օրինակ ՝ հերոսի պատմությունը, ով իր պատմությունը պատմում է մեկ ուրիշի համար:

1.2 Առակները հայ գրականության մեջ

Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ: Նա, ինչպես երեւում է իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության եւ ճարտասանության հետ նաեւ առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել եւ մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաաստելու համար: Ինչ վերաբերում է ժողովրդական առակներին, որոնցից մի քանիսը պատահաբար մեջ են բերում հին հեղինակները, նույն բախտն են ունեցել, ինչ-որ մեր հին ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես: Դրա պատճառն այն է, որ առակները եկեղեցականների կողմից ոչ միայն արհամարհված են եղել իբրեւ գեղջկական, ուստի անարժեք բաներ, այլեւ իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Զանազան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են *«հաւահմայք»*, *«հացահմայք»*, *«հատահարցք»*, մերժված եւ հաղորդության անարժան են համարել նաեւ *«զբախաւսք, զրատեսք, շրջողք տանէ ի տուն, հետաքրքիրք, զրուցատարք, առասպելախաւսք»*: Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն *«առասպել»*բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաեւ իբրեւ առակ:

Մեծ դժվարությամբ, ուրեմն, առակի տեսակը մուտք է գործում գրավոր գրականության մեջ: Եվ վերջապես 12-13-րդ դարերում արդեն հանդես են գալիս հայ նշանավոր առակագիրներ ՝Մխիթար Գոշը եւ Վարդան Այգեկցին : Մխիթար Գոշն առակների մեջ

տեսնում է բնականաբար 2 մաս՝ բուն պատմվածքը եւ խրատական եզրակացությունը։ Պատմվածքը, որ նա շեշտում է առակ, գաղափար, օրինակ, եղանակ եւ այլ բառերով, ըստ Մխիթար Գոշի լինում է 3 տեսակ՝ բարոյական, առասպելական եւ ստեղծական։ Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից եւ շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն։ Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն եւ բույսերին՝ իբրեւ գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են։

Հեղինակը իր առակների ժողովածուն կազմել է նպատակ ունենալով ստեղծել գեղարվեսական երկ՝ պատկերելով ճշմարտությունը, որը նույն է թե արտացոլել իրականությունը գեղառվեստորեն, կամ ինչպես հենց ինքն է նշում «բարոյապէս եւ արասպելորէն»[2]։

Նրա առակների նյութը հիմնականում հասարակական եւ կենցաղային խնդիրներն են, դասակարգերի, դասերի ու խավերի, անհատների փոխհարաբերության հարցերը, որոնք նոր էին հայ գրականության մեջ։ Այստեղ բազմազան գծերով արտացոլված է դարաշրջանի հասարակության պատկերը։ Առակագիրը շոշափում է խնդիրներ, որով նրա ժողովածուն առանձին կարեւորություն է ստանում ժամանակի սոցիալ–պատմական իրադրության պարզաբանման համար։ Մի շարք առակներում երեւում է հասարակական շերտավորումը եւ սոցիալական պայքարի առկայությունը։ Մարդիկ դատում ու դատապարտում են իշխաններին, տրտնջում թագավորներից, նույնիսկ՝ Աստծուց։ Սակայն, հեղինակի կարծիքով, ժողովուրդը պետք է հնազանդվի իշխողներին, իսկ վերջիններս պարտավոր են նրանց պահպանել օտար կեղեքիչներից ու վտանգից։ Առակներում եւս Մ. Գոշը կենտրոնացած ուժեղ պետականության գաղափարն է արծածում։ Այստեղ այլաբանորեն կոնկրետ մարդն է նկարագրվում՝ իբրեւ գյուղացի, քաղաքացի, ազնվական–իշխան, արհեստավոր, կրոնավոր, թագավոր եւ այլն՝ իր կեցության առանձնահատկություններով[3]։

Նույնքան ուշագրավ են Վ. Այգեկցու առակները։ Հայտնի է, որ նրա առակների գիտական հետազոտումը կատարել է հայագետ Նիկողայոս Մառն իր «Ժողովածոյք

[2] Տես, Մ. Գոշ։ առակներ, ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1951, էջ 4
[3] https://hy.wikipedia.org/wiki/Մխիթար_Գոշ

առակաց Վարդանաց» ուսումնասիրության մեջ: Նա գիտականորեն ապացուցում է, որ արաբերեն «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերեն համանուն ժողովածուից:
Կարեւորը եւ գլխավորն այն է, որ 12-13-րդ դարերում եւ հետո ամեն տեղ առհասարակ սիրում էին առակներ ու զրույցներ: Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր նաեւ աշխարհականների համար եւ զարգանում զանազան տիպերով եւ զանազան ծավալով:

ԳԼՈՒԽ 2. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ԴԵՐԸ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Առակը ոչ միայն գրական-գեղարվեստական ժանր է, այլեւ ժողովրդական բարոյախոսություն եւ մարդկանց բարոյակրթական մտածողություն: Այն յուրահատուկ ստեղծագործություն է՝ համառոտ բովանդակությամբ եւ կյանքի այլաբանական արտացոլման արվեստի իր յուրօրինակ միջոցներով: Ինչպես էլ որ հանդես է եկել առակը՝ գրավոր կամ բանավոր, բանաստեղծության կամ արձակի ձեւով, միեւնույն է, ունեցել է իր ազդեցությունը մարդկային գիտակցության ու վարքի, բարքերի ու սովորույթների վրա:

2.1 Աստվածաշնչյան առակների ուսուցման կարեւորությունը դպրոցում

Մշակույթը, գրականությունը, աշակերտի արժեհամակարգի ձեւավորման կարեւոր բաղադրիչներ լինելով, ուղղակիորեն կանխորոշում են նրա՝ որպես անհատի ձեւավորումն ու զարգացումը: Սակայն ժամանակակից դպրոցը ոչ միշտ է բավարարում աշակերտի կարիքները գեղագի- տական ոլորտներում: Խնդիրն առավել ակնհայտ է դառնում երեխաների ստեղծագործական, քննադատական մտքի զարգացման եւ դրսեւորման թիրախային դիտարկման ժամանակ: Մարդու կողմից ստեղծված գրական արժեքներին հաղորդակից լինելը դրական ազդեցություն է թողնում երեխաների ստեղծագործական, գեղագիտական մտքի զարգացման վրա, մոտիվացնում է նրանց վարքագիծը, ապահովում է երեխաների եւ հասարակության միջեւ կայուն հարաբերությունները:

Ըստ էության ուսուցումը պիտի միտված լինի նաեւ աշակերտների ստեղծագործական, կրթամշակութային կարիքների բավարարմանը եւ հոգեւոր, մշակութային միջավայրի բարելավմանը:

Բոլորովին պատահական չէ առակներում գեղարվեստական խոսքի այնպիսի հատկության դրսեւորումը, ինչպիսին է խոսքի կենդանությունը: Աշակերտներին հաղորդակից դարձնելով խոսքի այս հատկությունը՝ հատկապես նշվում է, որ այն ապահովվում է լեզվամիջոցների այնպիսի գործածությամբ, որի շնորհիվ կարեւորվում է նկարագրվող հասկացության առարկայորեն կոնկրետ արտահայտումը[4]:

Սույն հետազոտության մեջ անդրադարձ կատարվեց առակների գեղարվեստական արժեքին, հարկ ենք համարում նշել նաեւ դրանց հոգեւոր, դասիարակչական նշանակաությունը, որոնք առավել արտահայտված են աստվածաշնչյան առակներում: աստվածաշնչի ուսումասիրությունից պարզ է դառնում, որ իր Որդու երկիր գալուց դեռ տարիներ առաջ Աստված որոշել էր, որ նա ուսուցանելու է առակների միջոցով: Ուրեմն կարելի է ենթադրել, որ Աստված գնահատում է ուսուցանելու այս մեթոդը: Հիսուսը այնպես է սովորեցնում, որ նրանց համար հեշտ լինի հիշել: Սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում: Ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց, ում «սիրտը կարծրացել էր» ճշմարտության հանդեպ: Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները: Որոշ դեպքերում նա միտումավոր կերպով էր առակներով խոսում, որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար: Խոնարհ մարդիկ այդպես էլ անում էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ: Փաստորեն, առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ում սիրտը ծարավ էր ճշմարտության, սակայն թաքնված էր մնում նրանցից, ում սիրտը հպարտ էր: Հիսուսի առակներն ու օրինակները շատ առումներով էին օգտակար: Դրանք հետաքրքրություն էին առաջացնում մարդկանց մեջ՝ մղելով նրանց լսելու: Նաեւ պատկերներ էին ստեղծում մտքում, ինչի շնորհիվ հեշտ էր լինում հասկանալ: Քրիստոսը որպես ժողովրդի հետ հաղորդակցման լեզու ընտրել էր առակը՝ որպես

[4] Տես, Մելքոնյան Ս., Հովհաննես Շիրազ (գեղարվեստական վարպետության հարցեր), Երեւան Բարձրագույն դպրոց, 1993, էջ 118

առավելապես ընդունելի, ընկալելի եւ սիրելի, նախընտրված միջոց։ Նրա յուրաքանչյուր առակ հստակ պատգամ ունի։

Հայոց այբուբենն ստեղծելուց հետո Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտներն սկսեցին թարգմանել Աստվածաշունչը, եւ հենց հայերեն թարգմանված, հայերեն տառերով գրված առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», Սողոմոնի առակներից էր։ Ընդ որում՝ բոլոր ժամանակներում բազում իմաստուններ իրենց խոսքն ու միտքը, քննադատությունը հասարակությանը փոխանցել են այլաբանորեն, առակի միջոցով։

Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձեւավորվում է ազգային եւ համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում։ Սովորողի ճանաչողական արժեքները ձեւավորվում են գիտելիքի միջոցով. մտորել- գնահատել – իմաստավորել- յուրացնել ճանաչողական արժեւորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ։ Հետեւաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեք կրթական արժեւորման աստիճանակարգում։ Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլեւ ստեղծագործական ունակությունների դրսեւորում, համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքայի գիտակցություն։

Առակներն իրավիճակային զուգահեռումներին համարժեք բարոյախոսական կառույցով, հետաքրքիր զուգադրություններով, իմաստակիր արտահայտչամիջոցներով ծավալվում եւ քննումի ընդգրկուն հնարավորություն են տալիս։ Ուսուցողական լիցքերի անտեղիտալի գերակայությամբ առակի գրական տեսակն ըստ ամենայնի կարելի է լիարժեք օգտագործել աշակերտների դաստիարա-կության տիրույթում՝ նպաստելով երեխաների ճիշտ հաղորդակցմանը, ստեղծագործելու կարողությունների զարգացմանը, նրանց հետաքրքրությունների բացահայտմանը եւ այլն։ Առակներում ամեն ինչ չափվում եւ արժեւորվում է բարոյախոսության պահանջներով, ամեն ինչ ճշմարտվում եւ վերափոխվում է ըստ այդ պահանջների։ Առակի դիպաշարային կառուցվածքի մեջ կյանքի օրինաչափական ճիշտն է, եւ մի խորաքնին հայացք է պետք այդ ամենը տեսնելու, այդ ամենի ներքին կապերը բացահայտելու եւ ստուգելու համար։

2.2 Աստվածաշնչյան առակները եւ դրանց մեկնաբանությունը

Լինելով Քրիստոնեությունը առաջինը որպես պետական կրոն ընդունած ազգ, մեր իրականության մեջ Աստվածաշնչյան առակները մեծ տարածում են ունեցել եւ, բացի դպրոցներից, դրանք տարածված են եղել ու մնում ընտանիքներում, հատկապես, երեխաների դաստիարակության գործում: Հաճախ, ավագները հեքիաթի փոխարենը աստվածաշնչյան առակներ են պատմում երեխաներին դրանով ոչ միայն քրիստոնեական, այլ նաեւ համամարդկային արժեքներ փոխանցում երեխաներին:

Աստվածաշնչյան առակները շատ են, սույ աշխատանքում մեն անդրադառնում ենք մի քանիսին, եւ ներկայացնում դրանց մեկնությունը եւ դաստիարակչական նշանակությունը:

Անիծված թզենու առակը, որը ներկայացնում է, թե ինչպես Հիսուս, Բեթանիայից Երուսաղեմ վերադարձին, չորացնում է անպտուղ թզենին[5]: Թզենին հրեաների օրինակն է, եւ իջնելով երկնքից ու գալով հրեաների մոտ՝ Հիսուս նրանցից պահանջեց Աբրահամի հավատն ու գործերը, բայց գտավ միայն որդեգրության անունը, որը տերեւն է, եւ ոչ՝ պտուղը: Այդ պատճառով հարվածեց ու գոսացրեց նրանց դալարությունը. «Այսուհետեւ քեզնից հավիտյան պտուղ թող չլինի»:

Մարդիկ հաճախ կարեւորում են մարդկային հարաբերությունների ու կյանքի արտաքին հատկանիշները՝ արդյունքում զորացնելով ցուցամոլությունը, հոգեւոր դատարկությունը, անպտուղ կյանքը, ինչպես օրվա խորհրդանիշ թզենին՝ միայն տերեւներով զարդարված ու անպտուղ: Իսկ պտուղները, որոնք ակնկալում է Քրիստոս, գործերն են, որոնք ծառայում են այն սիրուն ու նվիրումին, որ յուրաքանչյուր քրիստոնյա ներդնում է իր «է»-ի մեջ:

Մեզանից յուրաքանչյուրն էլ մի «այգի» ունի, որտեղ ծառեր է տնկել: Ամեն տարվա այս օրը մեզ եւս մեկ անգամ հնարավորություն է տրվում մտնել այդ այգի ու վերանայել կյանքի ընթացքը եւ անպտուղ ծառերի հանդիպելով՝ վերարժեւորել եւ փոխել կյանքի ընթացքը: Այդ ճանապարհին հնարավոր է, որ փորձությունների հանդիպենք, սակայն դրանք ոչ թե մեր կամային հատկությունները զրոյացնելու համար է, այլ՝ մեր հավատքի մեջ ավելի ամրանալու եւ զորանալու:

[5] Տես Մատթ. 21:22

Մանանեխի հատիկի առակը

«Նրանց առաջ Նա մեկ ուրիշ առակ էլ դրեց ու ասաց. «Երկնքի արքայությունը նման է մանանեխի հատիկի, որ մի մարդ, առնելով, սերմանեց իր արտի մեջ: Այն փոքր է, քան բոլոր սերմերը, սակայն երբ աճում է, բոլոր բանջարներից ավելի է մեծանում ու ծառ է լինում, այն աստիճան, որ երկնքի թռչունները գալիս են ու նրա ճյուղերի վրա հանգստանում[6]»:

Մեկնություն

Արտն աշխարհն է, նաեւ մարդկանց սրտերը: Մանանեխի հատիկ Տերն Իրեն է անվանում, քանի որ ստանալով ծառայի կերպարանք, սերմանվեց երկրի սրտի մեջ՝ մեռնելով եւ գերեզմանում դրվելով[7]: Իսկ երբ հարություն առավ, փառավորվեց ու բարձրացավ, բոլորին դեպի Իրեն ձգեց, ժառանգեց ազգերին եւ իշխեց երկրի բոլոր ծագերին: Առաքյալներն այն ոստերն են, որոնց վրա հանգստացան երկնքի բոլոր թռչունները, այսինքն՝ մարգարեների եւ բոլոր արդարների հոգիները:

Մանանեխի հատիկը նաեւ Քրիստոսի խոսքն է Աստծո արքայության մասին, որ նախապես փոքր եւ անարգ էր երեւում, բայց արագ աճեց, քան ամեն խոսք, որ սերմանվել է մարդկանց մեջ, հույժ մեծացավ եւ զորացավ, մեծ Ծառ դարձավ, ու դեպի երկինք ձգտողներն ապաստան են գտնում Նրա գրկում:

Երկու որդիների առակը

Հիսուս խոսքի բռնվելով հրեա քահանայապետերի ու ծերերի հետ, բացատրում է նրանց, որ երկնքի արքայությունը պետք է վերցվի նրանցից եւ տրվի ուրիշներին եւ այդ ուղղությամբ երեք առակ է պատմում, որոնցից մեկը երկու որդիների առակն էր:

Հիսուս պատմում է, որ մի մարդ ուներ մի այգի եւ երկու որդի: Մի օր հայրը մոտենում է իր անդրանիկ զավակին եւ ասում.

-Որդյա՛կ, գնա՛ այսօր աշխատիր այգում:

- Գնում եմ, տե՛ր, - ասում է տղան, սակայն չի գնում աշխատանքի:

Հայրը մոտենում է մյուս որդուն եւ ասում .

-Որդյա՛կ, գնա՛ այսօր աշխատիր այգում:

- Չեմ ուզում գնալ, - պատասխանում է տղան, սակայն հետո զղջում է եւ գնում աշխատելու:

---

[6] Տես, Մատթ. 13: 31-32, Մարկ. 4: 30-32, Ղուկ. 13: 18-19

[7] Տե՛ս Հովի. 12:24

Հիսուս դառնալով իրեն շրջապատող ժողովրդին, հարցնում է.

-Արդ, երկու որդիներից ո՞վ կատարեց հոր կամքը:

- Վերջինը, - պատասխանեցին նրանք:

Այգին Աստծո եկեղեցին է: Այգում գործելը՝ այն ծառայությունն է, որ Աստված ուզում է, որ մարդիկ գործեն այդ բնագավառում: Առաջին տղայի խոսքը փարիսեցիների եւ դպիրների խոսքն էր, որոնք ասում էին, թե հնազանդ էին Աստծուն, տալիս էին դրական պատասխան, սակայն իրականում չեն գնում գործելու այգու մեջ:

Երկրորդ տղայի պատասխանը մեղավորների, մաքսավորների եւ հեթանոսների խոսքն էր, որոնք սկզբում մերժում, սակայն հետո հասկանում, զղջում եւ ընդունում Աստծո այգում ծառայելու պարտականությունը:

Աստված հավատում է մեզ: Սա ենթադրում է պատասխանատվություն՝Աստծո կամքը կատարելու եւ Տիրոջը ծառայելու: Քրիստոսի պատգամները հրամաններ չեն, այլ աստվածային հայտնություններ այն մասին, թե ինչպիսին կարող է լինել մարդը:

Մարդը Աստծո աշակերտը չէ միայն, այլեւ բարեկամը, հավատարիմ բարեկամը: Լինել քրիստոնյա նշանակում է Քրիստոսի հավատարիմ բարեկամը լինել: Եթե վաղ շրջանում մարդիկ հանուն Քրիստոսի նահատակվում էին ու այդ կերպ էին արտահայտում իրենց հավատարմությունն ու սերը, բարեկամությունը, ապա այսօր, բարեբախտաբար, նման խնդիր չկա: Բայց այսօր էլ արդիական է այն հարցը՝ դու Քրիստոսի հե՞տ ես, Աստծո կամքը կատարո՞ւմ ես, թե ոչ: Եվ արդյո՞ք կարող ենք հավատարիմ լինել մինչեւ վերջ[8]:

Այրի կնոջ եւ դատավորի առակը:

Այս առակը դպրոցականներին սովերեցնում է, որ անդադար ու անձանձրույթ պետք է աղոթել Աստծուն, ով անտարակույս կլսի իրեն դիմողի աղոթքների ու աղաչանքները այլ ոչ թե անիրավ եւ անաստված դատավորին , ով լսեց այրի կնոջը միայն նրա համար, որ վերջինս արդեն ձանձրացնում էր իրեն: Այրին Քրիստոսին թողած՝ ապավինում էր անիրավ դատավորին՝իրավունք էր խնդրում մեկ այլ դեւից, որպեսզի ձերբազատվի մեկ այլ անիրավի բռնությունից:

[8] https://www.qahana.am/post/2192

Անիրավ տնտեսի առակը

Այս առակում տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարություններն Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարարող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք եւ շահ պատրաստի: Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են: Մի օր դրանք այլեւս ձեռքի տակ չպիտի ունենա: Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որեւէ ձեւով օգտվի այդ բարիքներից, եւ երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաղած լինի:

Ուշագրավ է նաեւ օգուտ քաղելու ձեւը: Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել միայն պարտապանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն եւ կերակուր գտնի: Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր: Առակի նպատակն է հասկացնել եւ ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, ողորմել:

«Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ եւ բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր Աստծուն սիրելով եւ հանդերձյալ կյանքի ձգտելով՝ չեն հոգում երկրավորի մասին, այլ միայն հոգեւոր հարստությունն են արժեւորում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվել վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու ղզջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով եւ ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»:

Պահված գանձի օրինակը

Այստեղ շեշտը դրված է գանձի վրա, երբ հողագործը գտնում է այդ գանձը, նրա մոտ մեծ ցանկություն է առաջանում տիրանալ այդ գանձին՝ վաճառելով ամեն ինչ, ինչ որ ուներ: Ստացվում է, որ երկնային արքայությունը ժառանգելու համար պետք է հրաժարվել այս աշխարհում ունեցած հարստությունից: Ստացվում է , որ մարդը կարող է

պատահաբար գտնել երկնքի արքայությունը եւ պետք է իմաստուն կերպով ընտրություն կատարել:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են կարդում աստվածաշնչյան առակներ. առակներում հանդես եկող տարբեր երեւույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց դրական ու բացասական գծերով: Առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում . նա արդարացիորեն դիտարկում եւ վերլուծում է մարդկային տարբեր բնավորություններ, քննադատում բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ագահությունը, ժլատությունը եւ այլն:

Ի լրումս այս ամենի հոգեւոր , բարոյական որակների ձեռքբերման առումով էլ ավելի ուժ ունեն Հիսուսի առակները, որոնք իրական կյանքից վերցված պատմություններ են: Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են: Բարոյական, հոգեւոր արժեքների փոխանցման յուրահատուկ աղբյուր է «Մանկական աստվածաշունչը»: Հիսուս առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝բարերարության, լույսի, մարդասիրության դասեր տալով:

Կրկնության դասը հնարավորություն է տալիս ուսուցչին ՝անդրադառնալու Հիսուսի առակներին եւ դրանց միջոցով սովորողների մոտ ձեւավորելու նոր արժեքներ:

Առակների ուսուցման ժամանակ հարկավոր է ուսուցչի կողմից հստակ մեկնաբանվի յուրաքանչյուր միտքը իր արտահայտած իմաստով, քանզի այն կարող է երբեմն ստանալ ոչ ճիշտ ընկալում, քանզի առակն ինքնին խոհախրատական եւ փիլիսոփայական միտք է իրենից ենթադրում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության շրջանակներում հանգել ենք հետեւյալ եզրահանգումներին՝

- Մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը, այդ իսկ պատճառով առակները առավել ըմբռնելի եւ ընդունելի են մարդու կողմից: Այն դաստիարակչական նպատակ ունի է եւ օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչեւ այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ: Առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում . նա արդարացիորեն դիտարկում եւ վերլուծում է մարդկային տարբեր բնավորություններ, քննադատում բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ագահությունը, ժլատությունը եւ այլն:
- Առակներում միշտ կա քննադատություն, բարոյականության թեմաների արծածում: Բոլոր առակները սովորաբար ունենում են **քննադատություն որոշակի վարքագծի վերաբերյալ**, կամ բարոյական ուղերձ, այսինքն ՝ խորհուրդ կամ վարք, որը տեղին է: Այս բարոյականը սովորաբար արտահայտություն է, մի տող, մի բան, որը գրավիչ է եւ հեշտությամբ հիշվում աշակերտի կեղմից
- Աստվածաշնչյան աշխարհայեցողությունն առանձնակի կարեւորություն ունի կրտսեր սերնդի հայրենասիրական, մարդասիրական, գեղագիտական, բարոյահոգեբանական դաստիարակության կազմակերպման գործընթացներում: Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել եւ մնում են ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետեւող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա թե ինչու նոր սերնդին եւս պետք է առաջնորդել, ուղղորդել եւ բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք եւ խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Դասերը հաճախակի համեմել աստվածաշնչյան առակներով, որի արդյուքում այն կդառնա ավելի հետաքրքիր, հագեցած ու տեսանելի,իսկ աշակերտները կդառնան բարձր արժեհամակարգի տեր մարդիկ, կուղղորդվեն բարոյական սկզբունքներով եւ արժեքներով։
2. Կազմակերպել աստվածաշնչյան առակների թեմաներով միջոցառումներ, աշակերտներին հնարավորություն տալ հանդես գալ առակների հերոսների կերպարով, առակում եղած խրատը առավել խորն ընբռնելու համար։
3. Հաճախակի հանձնարարել երեխաներին կարդալ եւ սեփական պատկերացումներով մեկնաբանել աստվածաշնչյան առակները եւ կիսվել կարծիքով համադասարանցիների հետ միասին։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածաշունչ, Մատթ. 13: 31-32, Մարկ. 4: 30-32, Ղուկ. 13: 18-19 Հովհ. 12:24
2. Մ. Գոշ: առակներ, ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1951
3. Մելքոնյան Ս., Հովհաննես Շիրազ (գեղարվեստական վարպետության հարցեր), Երեւան Բարձրագույն դպրոց, 1993
4. http://books.panarm.info/եզոպոս-առակներ
5. https://hy.wikipedia.org/wiki/Մխիթար_Գոշ
6. https://www.qahana.am/post/2192